Հաստատում եմ

ԵԳՊԱ ռեկտոր

_____ *Ա. Է. Իսաբեկյան*

_____ _____ *2016թ.*

ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի Գեղարվեստի Պետական Ակադեմիա

Սեղմագիր

Այս փաստաթղթում նկարագրվում է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի միջազգայնացման գործընթացը՝ հաշվի առնելով հայաստանյան բուհերիզարգացման միտվածությունն ու համատեքստը: Ակադեմիայում ընթացող միջազգայնացման գործընթացի շրջանակներում շեշտը դրվում է այնպիսի բնագավառների վրա, ինչպիսիք են կրթությունն ու գիտությունը, միջազգային համագործակցության և ակադեմիական շարժունության ընդլայնումը, անհրաժեշտ փաստաթղթավորման տրամադրումը և ծառայությունների բարելավումը:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում գործում է պետական մշակութային երեք կրթական օջախ՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտը և Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան: Երեքն էլ հանդիսանում են մշակութային, ուսումնական, ստեղծագործական բարձրագույն հաստատություններ: Երեք բուհերն էլ պատրաստում են կադրեր ապահովելու երկրի ստեղծագործական գործունեությունը: Երեք մշակութային բուհերն էլ ունեն 70 տարվա պատմություն, և երեքն էլ ունեն ուսումնական գործընթացի, ծրագրերի բարելավման, բարեփոխումների կարիք, այս բուհերը, ինչպես Հայաստանի մնացած պետական կրթական հաստատությունները հաղթահարեցին անցումնային փուլը, և պարտադրվեց ուսումնական համակարգի նոր մոտեցում: Քանի որ 21-րդ դարը բնորոշվում է գլոբալիզացիայով. հետսովետական երկրների հաստատությունները ձգտում են հասնել միջազգայնացման՝ այդ ուղղությամբ մշակելով նոր մոտեցումներ, նոր մեթոդներ՝ համապատասխանեցնելու մասնագիտական որակավորումները միջազգային շուկայի պահանջներին և ստանդարտներին: Եվ անշուշտ երկրի ստեղծագործական կրթական հաստատությունները մասն են կազմում բոլոր մյուս հումանիտար և բնական գիտությունների բարձրագույն դպրոցների կողքին: Հատկապես Արևելյան Եվրոպայի երկրները սոցճամբարի գոտուց դուրս գալուց հետո կարիք ունեին արմատական փոփոխությունների թե՛ կառավարման, թե՛ քաղաքականության, թե՛ տնտեսության և թե՛ կրթության ոլորտներում: Հարկավոր էր փոխել Կրթության ոլորտի կառավարման մեխանիզմները. վերազինել նոր կադրերին, նորավարտ մասնագետներին տալով համապատասխան հմտություններ, ունակություններ միջազգային պահանջներին համահունչ: Կրթական ոլորտը որպես օրինակ վերցնում էր Եվրոպական կրթական ծրագրերը, որոնք բնականաբար չէին կարող միանգամից համապատասխանացվել և այդ ամենը արվում էր փուլ առ փուլ: Հայաստանը 2005 թվից միացավ Բոլոնիայի գործընթացին՝որն էլ արձանագրեց Հայաստանի կառավարության ու բարձրագույն ուսումնական հաստատությունների (ԲՈՒՀ), բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումների նշանակալի առաջընթաց: Եվ ԵԳՊԱ-ն անմիջապես ինտեգրվեց այդ գործընթացին: Ամենավերջին բարեփոխումները ներառել են. ա/Եվրոպական համակարգին համահունչ՝ որակի ապահովման ազգային համակարգի զարգացումը բ/բարձրագույն կրթության առավել օբյեկտիվ և արդյունավետ ֆինանսավորման ռազմավարություն, և գ/ ազգային կրթության որակավորման շրջանակները: Չնայած բազմաթիվ դրական զարգացումներին, բարձրագույն կրթության կառավարման և ղեկավարման նկատմամբ հասարակական ընկալումը անբավարար էր: Արևելյան Եվրոպայի երկրների

անկախացումից հետո ներմուծվեց Տեմպուս ծրագիրը՝ որը ուղղված էր կրթական ոլորտին, և որի նպատակն էր որոշակի բարեփոխումներ կատարել կառավարման գործիքների, ուսումնամեթոդական ծրագրերի, նաև ուսումնավարչական գործելաոճի մեջ: Արդյունքում՝ փորձի փոխանակումը, նոր մեթոդների կիրառումը բերեցին նոր մոտեցումներ, նոր մտահղացումներ: Այս փուլն իրականացնելուց հետո բացվեց այլ հեռանկար, այն էր՝ կրթական ոլորտում ուսումնական գործընթացի միջազգայնացումը: Քանի որ միջազգայնացումը ազգերի միջև տեղի ունեցող փոխազդեցությունն է, որը գործում է և՛ քաղաքական, և՛ տնտեսական, և՛ կրթական և մշակութային ասպարեզներում, հետևաբար տալիս է իր պտուղները ինչպես դրական, այնպես էլ բացասական առումներով. դրական առումներով տեղի ունեցան բարեփոխումներ՝ փորձի փոխանակում, որոնք հանգեցրեցին նոր վերաբերմունքի ձևավորմանը, նոր մոտեցումների, նոր գաղափարների ի հայտ գալուն և կիրառմանը: Բացասական առումով՝ խնդիր է առաջանում ազգային նկարագրի պահպանման և միևնույն ժամանակ ինտեգրվելու եվրոպական կրթական միջավայրին: ԵԳՊԱ-ի համար կարևոր է փորձի փոխանակման, բարեփոխումների միջոցով հասնել կատարելության առանց կորցնելու ազգային մշակույթն ու դիմագիծը: Սկզբունքայնորեն միջազգայնացման այս գործընթացը պահպանում է երկրի մշակութային դիմագիծը, փոխվում են ազգային մշակույթի զարգացման, պահպանման կրթական գործիքները:

Յուրաքանչյուր փոփոխություն նպաստում է մի նոր փուլի զարգացմանը՝ համաշխարհային քաղաքականության մեջ ինտեգրվելու նպատակով: Բնականաբար, Հայաստանը արձանագրել է նկատելի փոփոխություններ բարձրագույն կրթության համակարգում: Բարձրագույն կրթության միջազգայնացման գործընթացն իրականացնելը պահանջում է Եվրամիության երկրների բարձրագույն հաստատությունների հետ սերտ համագործակցություն, որն էլ ԵԳՊԱ-ն փորձում է իրականացնել:

2008 թ.-ին ՀՀ կառավարության կողմից ստեղծվեց Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ), որի առաքելությունն է ուսումնական հաստատություններում խթանել որակի ապահովման գործընթացները: ՈԱԱԿ-ի հիմնական գործառույթներից մեկն է իրականացնել և աջակցել բուհերի հավատարմագրման գործընթացին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵԳՊԱ-ն պատրաստում է կադրեր՝ արվեստագետներ, որոնք իրենց ստեղծագործական՝ նկարչական, դիզայներական գործունեությամբ ապահովում են երկրի մշակութային ժառանգությունը, առանձնահատուկ կարևոր է դառնում ԵԳՊԱ-ի ճանաչումը՝ իրականացնելով հավատարմագրման գործընթաց, որը ինքնին միջազգայնացման կարևորագույն դրույթներից մեկն է:

ԵԳՊԱ-ն պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որի կառավարումը պետական է և բյուջեն նույնպես վերահսկվում է պետության կողմից: ԵԳՊԱ-ն ՀՀ բարձրագույն կրթության համակարգի բոլոր բուհերի պես պետբյուջեից ստանում է միայն իր միջոցների 25%-ը, իսկ մնացածը գոյանում է ուսանողների վճարներից: Պետական ցածր ֆինանսավորման հետեւանքով ՀՀ պետական բուհերը, նաև ԵԳՊԱ-ն ստիպված անցան վճարովի կրթական համակարգին:

Միջազգայնացումը և արվեստի շուկան

Տարբեր ցուցանիշներ վկայում են, որ արվեստի շուկայի գլոբալիզացիան նպաստում է ժամանակակից արվեստի միջազգային աշխարհի տարածքային վերակազմավորմանը մի քանի խոշոր տարածաշրջանային շուկաների, որոնք ձևավորվում են Միացյալ Նահանգների և Եվրոպայի շուրջ: Արվեստի միջազգային շուկայի կենտրոնացվածության և ինտեգրվածության բարձր աստիճանը, ինչպես որ չափվում է միջազգային ուղղվածություն ունեցող ժամանակակից արվեստի փառատոնների աճով, այնուամենայնիվ, չի նշանակում, որ տեղական, ազգային կամ վերազգային համացանցային աշխատանքները կամ արվեստի շուկաները անհետացել են: Իրականում այս համացանցերն ու շուկաները շարունակում են գործել. դրանք բազմազան են և գործում են տարբեր մակարդակներով՝ նպաստելու նկարչի ճանաչմանը:

Ի լրումն վերը նշվածին՝ հայաստանյան արվեստի շուկան ընդհանրապես ընդգրկված չէ համաշխարհային արվեստի շուկայի մեջ: Ինչպես գիտենք, այսօր միջազգային արվեստի շուկան կառավարում են երկու մեծ աճուրդային տներ: Հայաստանում կա 7 պատկերասրահ, սակայն դրանք, ավաղ, մրցունակ չեն: Խնդիրն այն է, որ Հայաստանը ունի պատկերասրահներներ, բայց չունի մշակված քաղաքականություն պատկերասրահների միջոցով համաշխարհային շուկա մտնելու համար:

Հայաստանն ունի հզոր ստեղծագործական ներուժ: Մեր նկարիչները տաղանդավոր են, բայց որոշակի քաղաքականություն մինչ այժմ չի մշակվել, որպեսզի արվեստը տեղափոխվի տնտեսական դաշտ: Ազգային արվեստի խնդիրներից մեկն է հանդիսանում հստակ քաղաքականության մշակումը՝ հայ արվեստը խթանելու, վերջինիս

միջազգային ճանաչմանը նպաստելու համար: Տեմպուս PICASA ծրագրի միջոցով, փորձի փոխանակման, տարբեր այցերի շնորհիվ ԵԳՊԱ-ի միջազգային կապերի բաժինը ակտիվորեն մասնակցում է տարբեր ծրագրերի և ձեռք բերված գիտելիքը փոխանցում է ուսանողադասախոսական կազմին, որի միջոցով դյուրին է դառնում ազգայինից դեպի միջազգային շուկա անցման մշակումը: Ներկայումս Հայաստանը գտնվում է նախնական փուլում, որը իր մեջ ընդգրկում է ծանոթություններ, ճանաչում, փոխադարձ այցեր: Երկրորդ փուլում հարկավոր է անցնել միջազգայնացման ծրագրի մշակմանը, միջազգային փորձագետների հետ ծրագրերի ուսումնասիրությանը և քննարկմանը: Երրորդ փուլը նախատեսում է մշակված ծրագրի առկայությունը և ուսումնական գործընթացը, որն ուղղված պետք է լինի ուսանողներին սովորեցնելու միջազգային շուկայում իրենց ստեղծագործությունների համար ինքնուրույն բենչմարքինգ անելու կարողությունների փոխանցմանը: Միջազգային փորձը պետք է միշտ առկա լինի ուսումնական պրոցեսում: Այսպիսով, յուրաքանչյուր դասախոս կամ ուսանող պետք է պատրաստ լինի իր երկրի տնտեսության մեջ ներդրում անելուն: Եվ այս ներդրումն էլ իր հերթին արժևորվելու է միջազգային շուկայում:

Դեռևս հնագույն ժամանակներից Հայաստանը հանդիսացել է Արևելքի և Արևմուտքի միջև խաչմերուկ, հայտնի է իր մետաքսի ճանապարհով, ունի տարածաշրջանում վաղուց մշակված իր ճանապարհներն ու հստակ ծրագրերը: Ելնելով այս փաստից հարկավոր է ունենալ այնպիսի մշակութային ռազմավարություն, որը ուղղված կլինի արժեքների գնահատման միջազգայնացմանը, և այս համատեքստում ԵԳՊԱ-ի դերը որպես մշակութային օրրան ավելի կկարևորվի ազգային և վերազգային ոլորտներում, կմեծանա իր գրավչությունը՝ հավաքագրելով ավելի մեծ թվով դիմորդներ, հրավիրված դասախոսներ, որով կնպաստի ԵԳՊԱ-ի հեղինակության բարձրացմանը և ճանաչմանը երկրում և երկրից դուրս:

Ինստիտուցիոնալ մակարդակ

ԵԳՊԱ-ի առանձնահատկությունը նրա ուղղորդվածությունն է՝ նպաստելու մշակույթի զարգացմանը: Բուհը պատրաստում է մասնագետներ, որոնց ստեղծագործությունը, աշխատանքի արդյունքը ապագայում երկրի մշակութային ժառանգության մասն է կազմելու: ԵԳՊԱ-ն պատրաստում է արվեստագետներ, որոնք կարող են աշխատել թանգարաններում, հրատարակչություններում, արվեստի այլ օջախներում, պատրատում է կուրատորներ ցուցահանդեսների կազմակերպման համար, դիզայներներ, որոնք աշխատում են պետական և մասնավոր ձեռնակություններում, որպես ձևավորողներ, նկարիչներ, քանդակագործներ, հագուստի մոդելավորման մասնագետներ:

Ինչպես բոլոր բուհերում, այնպես և ԵԳՊԱ-ում անխուսափելի է սերունդների մոտեցումների առճակատումը՝ սոցիալ-գաղափարական, մտածելակերպի, մեթոդների, ուսումնական գործընթացի նորովի ըմբռնման, համապատասխանեցման առումով:

Միջազգայնացման գործընթացի գործիքներից մեկն է հանդիսանում աստիճանաբար ձևավորել հնի և նորի համադրումը, ընդգրկելով ուսանողադասախոսական կազմին միջազգային ծրագրերին, որն նպաստում է ուսումնական գործընթացի արդիականացմանը ու առաջխաղացմանը:

Այս վերջին հինգ տարիների ընթացքում ԵԳՊԱ-ն ընդգրկվել է բազմաթիվ Տեմպուս միջազգային կրթական ծրագրերին:

Կարող ենք նշել օրինակ՝

ա/ “Կառավարման” ազգային ծրագիրը (Tempus Govern project http://govern.am): Ծրագրի շրջանակներում անցկացվեցին մի շարք վերապատրաստման դասընթացներ, որոնք նվիրված էին ուսումնական վարչությունների և ուսանողների հաշվառման կենտրոնների աշխատանքների բարելավմանը: Սա ինստիտուտի կառավարման նոր մեթոդի մշակման գործիքներից է, որը նպաստում է միջազգայնացման գործընթացի բարելավմանը:

բ/ Հաջորդ կարևորագույն ծրագիրը Տեմպուս ALIGN (Achieving and checking the alignment between academic programmes and qualification frameworks; http://align.brusov.am) ծրագիրն է, որի նպատակն է բարձրացնել ըմբռնելիությունը, որակավորումների համահնչունությունը եւ փոխանցելիությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների համար մեխանիզմների ստեղծման միջոցով՝ հասնելու կրթական ծրագրերի

համապատասխանելիությանը ազգային որակավորումների շրջանակի և որակի ապահովման գործակալությունների հետ՝ ստուգելու այդպիսի համապատասխանելիությունը:

գ/ Հաջորդը Տեմպուս PICASA ծրագիրն է, (http://picasa.ysu.am/) որը նույնպես, ինչպես մնացած Տեմպուս ծրագրերը, ֆինանսավորվում է Եվրամիության կողմից և ուղղված է նպաստելու Հայաստանի, Վրաստանի, Բելառուսի և Ուկրաինայի՝ Արևելյան գործընկերության տարածաշրջանի բարձրագույն կրթական համակարգի ճանաչմանը՝ բուհական մենեջմենթի կառուցվածքային ու մշակութային բաղադրիչներում միջազգայնացման զարգացման ու ինտեգրման միջոցով:

դ/ Տեմպուս VERITAS ծրագիրը (կրթության երրորդ մակարդակի զարգացում Զալցբուրգի սկզբունքների հիման վրա http://tempusveritas.am/). նպատակն է նպաստել երրորդ շրջափուլի կրթական ծրագրերի միջազգայնացմանը՝ մշակելով և ներդնելով կոչումների շնորհման՝ Զալցբուրգի սկզբունքներին համահունչ և միջազգային չափանիշների՝ Եվրոպական որակավորման շրջանակի հետ համադրելի կարգ:

Բուհերի ազգային վարկանիշավորման համակարգում (որը փորձնական ծրագիր է՝ ներդրված 2013թ.-ից) արվեստի բուհերի ցանկը ԵԳՊԱ-ն գլխավորում է 4.26 ընդհանուր վարկանիշով (http://ranking.armedu.am/index.php/ratings/cluster/8): Միջազգային ուղղվածությամբ, գիտահետազոտական աշխատանքի և աշխատանքային շուկայի ենթախմբերում ՀՀ արվեստի բուհերի մեջ զբաղեցնում է առաջին հորիզոնականը (http://ranking.armedu.am/index.php/ratings/cluster/8/group/3 http://ranking.armedu.am/index.php/ratings/cluster/8/group/4 http://ranking.armedu.am/index.php/ratings/cluster/8/group/7):

2012-ին ԵԳՊԱ-ն ներգրավվեց ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացում: ԵԳՊԱ-ն 2015-2016 թթ. իրականացնում է ինքնավերլուծություն, որպեսզի հետագայում դիմի հավատարմագրման: Այս գործընթացում բուհը մշակեց միջազգայնացման նոր հայեցակարգ: Վերջինս որպես առանձին փաստաթուղթ առաջին անգամ է մշակվում, քանի որ միջազգայնացմանն ուղղված խնդիրներն ու նպատակները նախկինում զետեղված են եղել միայն ԵԳՊԱ-ի զարգացման ռազմավարական ծրագրում (ԵԳՊԱ զարգացման ռազմավարական ծրագիր 2012-2016, էջ 18, 29):

Հաշվետվողականությունը մեծացնելու նպատակով ԵԳՊԱ-ն մշակում է նաև գործողությունների տարեկան պլան, որի մեջ ներառված է գործողությունը՝ կատարման ժամանակացույցով:

ԵԳՊԱ միջազգայնացման քաղաքականությունը սահմանում է միջազգայնացման նպատակներն ու խնդիրները և դրանց ուղղված գործողությունների ամբողջական ցանկը, որտեղ նշված են կատարման ժամանակացույցը, պատասխանատուները, անհրաժեշտ ռեսուրսներն ու գնահատման ցուցիչները: 2016 թվականին հաստատված այս փաստաթուղթը հնարավորություն է տալիս համակարգելու և ուղղորդելու միջազգայնացումը բուհում, որը սահմանվում է որպես ռազմավարական նպատակ, և որը զետեղվելու է ԵԳՊԱ-ի 2017-2021 ռազմավարական պլանի մեջ:

Ռազմավարական մարտահրավերներ

ԵԳՊԱ–ի գործունեությունը սկսվում է 20-րդ դարի կեսերից, Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո, 1945 թվականից բուհն ըստ էության Խորհրդային Հայաստանի միակ բարձրագույն արվեստի դպրոցն է եղել և մինչև այսօր որպես այդպիսին միակն է՝ իր գործունեությամբ եւ առաքելությամբ: Միջազգային բաժինը ստեղծվել է 2007 թվականին, ունի 8-ամյա գործունեության պատմություն:

ԵԳՊԱ-ն համարվում է Հայաստանի մշակութային կրթական օջախ: ԵԳՊԱ-ն ունի մոտ 275 աշխատակից, որից հիմնական դասախոսական կազմը՝ 91, որից 35 պրոֆեսոր, 18 դոցենտ, 25 ավագ դասախոս, 13 դասախոս, 1 թղթակից անդամ, 6 գիտությունների դոկտոր, 25 գիտությունների թեկնածու:

ԵԳՊԱ-ի համար այժմ առաջնահերթ է դառնում ինտեգրվել միջազգայնացման գործընթացին: Այս համատեքստում կարևոր է հասկանալ, որ միջազգայնացումը միտված է ոչ միայն խթանելու ուսանողների շարժունությունը, այլ նաև իրականացնելու ԵԳՊԱ-ի ռազմավարական պլանի խնդիրներն ու նպատակները, որի արդյունավետությունը կնպաստի բուհի ընդհանուր ուսումնական գործընթացին: ԵԳՊԱ-ի միջազգային կապերի բաժինը, մեկուսացված չի կարող գործել, առնչվում է ուսումնական գործընթացի հետ և համատեղ աշխատանքի շնորհիվ իրականացնում է ԵԳՊԱ-ի որդեգրած առաքելությունը, որն է՝ ա/ կերպարվեստի, կիրառական արվեստի և դիզայնի ոլորտների համար բարձր որակավորման մասնագետների պատրաստումը, բ/ ստեղծագործական և գիտական բնույթի հետազոտական կրթական ծրագրերի մշակումն ու իրականացումը, գ/ հասարակության համախմբմանն ու գեղագիտական ճաշակի

բարձրացմանն ուղղված ծառայությունների իրականացումը:
Վերը նշված առաքելությունն իրականացնելու համար ԵԳՊԱ-ի կողմից որդեգրված հիմնական նպատակներն են՝

1. Ակադեմիական ծրագրերի և ուսուցման մեթոդոլոգիայի բարեփոխում և արդիականացում,
2. Կրթության որակի ապահովման գործընթացի հստակեցում և իրականացման մեխանիզմների մշակում,
3. Հետազոտության բարելավում,
4. Միջազգային կապերի ընդլայնում և ուսանողների փոխանակման ապահովում,
5. Հասարակությանը մատուցվող ծառայությունների բարելավում:

ԵԳՊԱ-ի միջազգայնացման գործընթացը և միջազգային կապերի բաժնի գործողությունների շրջանակը իրականացվում են ըստ նշված նպատակների:

Միջազգային կապերի բաժնի առաքելությունը

Առաքելությունն է՝ նպաստել բուհի միջազգայնացմանը, ուսանողադասախոսական կազմի շարժունությանը փոխանակման ծրագրերի միջոցով և համագործակցությանը արտասահմանյան լավագույն արվեստի բուհերի հետ և դառնալ տարածաշրջանում մրցունակ բուհ, ինչպես նաև միջազգայնացման շնորհիվ ապահովել տրվող որակավորումների ճանաչումը: Այս ամենի շնորհիվ հնարավորություն կստեղծվի ուսանողին տրամադրել միջազգային ստանդարտներին համապատասխան կրթություն, որն էլ իր հերթին կնպաստի ԵԳՊԱ-ի ճանաչմանը և վարկանիշի բարձրացմանը միջազգային ասպարեզում:

2017-2021 թթ. համար սահմանվել են հինգ հիմնական խնդիրներ, որոնք ուղղված են միջազգային կապերի բաժնի (ՄԿԲ) գործունեության զարգացմանը և, այսպիսով, ԵԳՊԱ-ում միջազգայնացման գործընթացի հեշտացմանը:

Ապահովել ՄԿԲ-ի փաստաթղթային հիմքը

Միջազգայնացմանն ուղղված հետագա գործունեության հիմքն ապահովելու համար ՄԿԲ-ն պետք է պատրաստի և հաստատի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Նախ և առաջ, անհրաժեշտ է կատարել տարբեր արտասահմանյան բուհերի միևնույն բաժինների հետ գործառույթների, քաղաքականության և ռազմավարական ծրագրերի բենչմարքինգ /համեմատական փորձի վերլուծություն/: Հաշվի առնելով բենչմարքինգի արդյունքները՝ շատ կարևոր է մշակել ՄԿԲ-ի կանոնադրությունը, որում կարտացոլվեն ինչպես բաժնի, այնպես էլ բաժնի ներսում հաստիքների համար նախատեսված գործառույթները: Հաջորդ քայլը ԵԳՊԱ-ի միջազգայնացման ռազմավարության և, համապատասխանաբար, ՄԿԲ-ի ռազմավարական ծրագրի վերանայումն է: Այս ամենը կապահովի ներքին միջազգայնացման գործընթացի կազմամկերպումը՝ արտասահմանյան լավագույն փորձին համահունչ:

Արտաքին կապերի զարգացում

Սա ՄԿԲ-ի ամենակարևոր գործունեություններից է, քանի որ այն հնարավորություն է տալիս ներկայացնել ԵԳՊԱ-ն արտասահմանյան բուհերի շարքում, ընդլայնել վերջիններիս հետ ակադեմիական և մշակութային համագործակցությունը, ինչպես նաև ստեղծել ամուր հիմքեր ուսանողադասախոսական շարժունության համար: Տվյալ պահին ԵԳՊԱ-ն ունի շուրջ 20 պայմանագիր արտասահմանյան բուհերի հետ, սակայն դրանցից ոչ բոլորն են այնքան ակտիվ, որքան որ կցանկանայինք, ուստի անհրաժեշտ է ակտիվացնել հին պայմանագրերը և ձեռք բերել նորերը, հատկապես հետազոտության և գիտության բնագավառում: Ուսանողադասախոսական և վարչական կազմի համար ավելի շատ հնարավորություններ ստեղծելու համար հարկավոր է բացահայտել և դիմել նորանոր ծրագրերի, այսպիսով մեծացնելով ֆինանսավորման հնարավորությունը: Ի լրումն այս ամենին, համատեղ տարբեր մշակութային իրադարձություններ պետք է կազմակերպվեն հասարակությանը ծառայություններ տրամադրելու և բուհերի շուկայում ԵԳՊԱ-ի ճանաչումն ապահովելու նպատակով:

Դասախոսների և ուսանողների շարժունություն

ԵԳՊԱ-ի միջազգային գործունեությունը վերջին հինգ տարում աճել է, կնքվել են պայմանագրեր եվրոպական և ԱՊՀ երկրների բուհերի միջև: Ուսանողների կողմից նախընտրելի ուղղություններն են Ֆրանսիայի, Իտալիայի և Ռուսաստանի՝ Սանկտ-Պետերբուրգի արվեստի բարձրագույն դպրոցները: Վերջին 3 տարվա ընթացքում փոխանակման ծրագրերով Սանկտ-Պետերբուրգ մեկնել են 8 ուսանող, Ֆրանսիա՝ 9, Իտալիա՝ 6: Արտագնա ուսանողների թիվը ավելի շատ է, քան ներգնա ուսանողներինը՝ ընդամենը 5 ուսանող:

Արտասահմանյան երկրներից իրենց իսկ նախաձեռնությամբ սովորելու են գալիս հիմնականում Իրանի Իսլամական Հանրապետությունից, Սիրիայից, Ռուսաստանից, Վրաստանից: ԵԳՊԱ-ի ընդհանուր ուսանողների թվից 7%-ը /45 ուսանող/ օտարերկրացիներ են, որոնք սովորում են կրթական երեք աստիճաններում:

Միջազգային դրամաշնորհների շրջանակներում ԵԳՊԱ-ի նվաճումները աճել են վերջին երեք տարիների ընթացքում. HENGEAR http://www.hen-gear.net/ դրամաշնորհային ծրագրով ԵԳՊԱ-ում բացվեց մասնագիտական կողմնորոշման և տեղեկատվության կենտրոն, որը ստեղծեց ԵԳՊԱ-ի ընթացիկ ուսանողների և շրջանավարտների տվյալների բազա, որը ապահովում է շրջանավարտների և շահեկիցների միջև կապը և արձագանքները կապված ուսանողի հմտությունների հետ: HESDESPI http://www.tempus-hesdespi.eu դրամաշնորհային ծրագրով ուսումնական ծրագրերում ներմուծվեց երկու դասընթաց՝ բակալավրիատում "տեղեկատվական տեխնոլոգիաները արվեստի ոլորտում", իսկ մագիստրատուրայում՝ "արվեստի կառավարում" առարկաները:

2012-2016թթ. միջազգային կապերի բաժինը ՀՀ կառավարության մարմինների, նախարարությունների հետ համատեղ կազմակերպում է ամենամյա աշխատաժողովներ հրավիրելով տարբեր երկրների պրոֆեսորներին: Սա ևս միջազգայնացմանը նպաստող գործիքներից է, շփումը օտարերկրյա մասնագետների հետ թույլ է տալիս լսել տվյալ երկրի լեզուն, հասկանալ, ըմբռնել այլ մշակույթին պատկանող անձի վերլուծությունները, ուսանողների, դասախոսներին հնարավորություն է տրվում այդ մասնագետների միջոցով սինթեզել երկու մշակութակրթական համակարգերը: Յուրաքանչյուր համագործակցություն նպաստում է ԵԳՊԱ-ի վարչական, ուսանողադասախոսական կազմի նոր գաղափարների, նոր մտածելակերպի ձևավորմանը, նոր առաջարկների ի հայտ գալուն:

Այս բնագավառը խթանելու համար դեռևս անհրաժեշտ է մշակել կանոնակարգ արտասահմանում սովորելու և հետազոտության ոլորտում համագործակցության համար, ինչպես նաև ավելի մեծ թվով ուսանողներ հավաքագրելու և

օտար լեզվի ուսուցում կազմակերպելու համար: Այս վերջինը գերխնդիր է հանդիսանում, որը պետք է իրականացվի ԵԳՊԱ-ում և՛ ուսանողների, և՛ անձնակազմի համար: Դա նոր հնարավորություններ կտա շարժունության և փորձի փոխանակման բնագավառում: Անջրպետը հենց այստեղ է՝ սերունդների մտածելակերպի և կարծրատիպերի մեջ. փորձառու, գիտելիքներով հարուստ դասախոսների, որոնք օտար լեզվին չեն տիրապետում և երիտասարդ դասախոսների միջև, որոնք տիրապետում են օտար լեզվին, բայց չունեն բավարար փորձ ու գիտելիք: Շատ ավելի բարդ է փորձառուներին շահադրդել օտար լեզվին տիրապետել: Գոյություն ունեցող ինստիտուցիոնալ մակարդակով միջազգային ծրագրերը պետք է օգտագործվեն պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմին վերապատրաստելու ուղղությամբ, քանի որ ԵԳՊԱ-ն ձգտում է, համապատասխանեցնելով եվրոպական չափորոշիչներն ու ուղենիշները, հասնել մարդկային ռեսուրսների որակավորման բաձրացմանը:

Ակադեմիական ծրագրերի բարելավում

Վերջին մի քանի տարիների ընթացքում մի շարք փոփոխություններ են կատարվել ԵԳՊԱ-ում: Այսպիսով, անկախացումից հետո սկսվեցին կրթական համակարգի կառուցվածքային փոփոխությունները, անցնելով եռաստիճան համակարգի՝ բակալավրի և մագիստրոսի, հետազոտողի: 2007 թվականից սկսեց ներդրվել /ԿՓԵՀ/ կրեդիտային համակարգը բակալավրի և մագիստրոսի բոլոր ծրագրերում:

Դեռևս կատարվում են բարեփոխումներ ուսումնավարչական համակարգում: Վերանայվում են ուսումնական պլանները՝ միջազգային ստանդարտներին համապատասխան՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածք ինտեգրվելու համար: Արդեն երկու տարի է հաստատվել են դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի բակալավրի աստիճանի առաջին և երկրորդ կուրսերի, նաև մագիստրատուրայի առաջին և երկրորդ կուրսերի նոր ուսումնական պլանները: Պարբերաբար վերանայվում են բոլոր ֆակուլտետների ուսումնական պլանները: Միջազգայնացումը միտված է թարմացնելու և փոփոխելու ուսումնական պլանները՝ միջազգայնացման սկզբունքներին համապատասխան: Վերը նշված բարեփոխումները կնպաստեն ԵԳՊԱ-ի կողմից շնորհվող որակավորումների և կրեդիտների ճանաչմանը ազգային և միջազգային մակարդակներում, որը իր հերթին կնպաստի ԵԳՊԱ-ի և իր ակադեմիական ծրագրերի միջազգայնացմանը՝ այսպիսով խթանելով նաև ուսանողների

շարժունությունը: Որպես սկզբնական քայլ՝ ԵԳՊԱ-ն իրականացրեց բենչմարքինգ, իսկ այժմ պատրաստվում է թարմացնել ակադեմիական ծրագրերը: Կրթական համակարգում որոշակի փոփոխություններ ներդնելիս Որակի ապահովման կենտրոնը պատրաստում է հարցաշարեր, իրականացնում է հարցումներ՝ բացահայտելու համար ուսանողների կարիքներն ու կարծիքը: Չնայած ՄԿԾ-երի /ակադեմիական ծրագրերի/ արդիականացման գործընթացն արդեն սկսվել է, սակայն դեռևս կան որոշակի բացթողումներ, որոնք պետք է շտկել միջազգայնացումը խթանելու ճանապարհին: Դրանցից են, օրինակ, դասախոսական կազմի համար վերապատրաստման դասընթացների անհրաժեշտությունը ծանոթանալու ակադեմիական ծրագրերի հետ կապված միջազգային ստանդարտներին և մոտեցումներին, անհրաժեշտ է ավարտել երկու ակադեմիական պիլոտային ծրագրի վերանայումը և, այնուհետև, անցնել մյուս ծրագրերին: Ավելի մեծ թվով արտասահմանցի ուսանողների գրավելու համար անհրաժեշտ է մշակել և ներդնել առնվազն մեկ ակադաեմիական ծրագիր օտար լեզվով:

Ինչ վերաբերում է հետազոտությանն ու գիտությանը, 2014թ. ԵԳՊԱ-ում ստեղծվեց հետազոտական կենտրոնը: Կենտրոնի նպատակն է կազմակերպել սեմինարներ, հաստատել համագործակցություն տեղի և միջազգային գործընկերների հետ, նախաձեռնել և մեկնարկել համատեղ հետազոտական ծրագրեր վերջիններիս հետ:

Կենտրոնի մեկ այլ կարևոր գործունեությունն է կատարել կրթական 3-րդ մակարդակի կառուցվածքային զարգացում՝ Զալցբուրգի սկզբունքների հիման վրա: Ակադեմիան մշակութային կապեր է հաստատել և՛ անկախ մասնագետների և՛ որոշ հետազոտական կենտրոնների հետ: Այս համագործակցությունը և կազմակերպվող իրադարձությունները նպաստում են ուսանողների և դասախոսների նորովի ընկալմանը և մտահորիզոնի ընդլայնմանը, որը ևս, իր հերթին, նպաստում է հաստատության միջազգայնացմանը:

Աշխատանքային Պլան

1. Շահակիցները

ԵԳՊԱ-ում միջազգայնացման գործընթացի շահակիցների մի քանի խումբ կարելի է առանձնացնել (տես աղյուսակ 1), որոնց ԵԳՊԱ-ն մատուցում է տեղեկատվական, վարչական և ֆինանսական բնույթի աջակցություն:

Աղյուսակ 1

Շահակիցների խումբ	Տեղեկատվության տրամադրում	Վարչական աջակցություն	Ֆինանսական աջակցություն
ԵԳՊԱ ուսանողներ	+	+	-
ԵԳՊԱ դասախոսներ	+	+	-
ԵԳՊԱ վարչական աշխատողներ	+	+	-
Շրջանավարտներ	+	+	-
Արտասահմանցի ուսանողներ	+	+	-
Սփյուռքահայ ուսանողներ			
Արտասահմանցի դասախոսներ	+	+	-
Գործընկեր բուհեր	+	+	-
Միջազգային կազմակերպություններ	+	+	-
ՀՀ-ում օտարերկրյա դեսպանություններ և հյուպատոսական ներկայացուցչություններ	+	+	-
ՀՀ ԿԳՆ	+	+	-
Թանգարաններ, պատկերասրահներ,	+	+	-

մշակութային կազմակերպություններ			
ՈԱԱԿ	+	+	-

2. Նպատակները, խնդիրները և գործողությունները

Միջազգային կապերի բաժնի նպատակն է զարգացնել միջազգային կապերը և խթանել ուսանողների և դասախոսների շարժունությունը:

Միջազգային կապերի բաժնի խնդիրները դիտարկվում են /ծավալվում են/ երկու հիմնական ուղություններով՝

Գործառնական՝

1. Մշակել և ներդնել ուղեցույցներ, քաղաքականություն և ընթացակարգ միջազգային կապերի բաժնի արդյունավետ գործունեության համար
2. Մշակել և ներդնել որակի ապահովման կայուն համակարգ, որը կխթանի և կընդլայնի ՄԿԲ գործունեությունը:

Ֆունկցիոնալ՝

3. Հիմնել նոր համագործակցություն և ընդլայնել գոյություն ունեցող համագործակցության կապերը համապատասխան բուհերի և այլ շահակիցների հետ ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում
4. Խթանել և հեշտացնել ԵԳՊԱ ուսանողների և դասախոսների շարժունությունը
5. Խթանել ԵԳՊԱ կրթական ծրագրերի բարելավումը՝ տրամադրելով խորհրդատվություն ծրագրերի միջազգայնացման վերաբերյալ
6. Խթանել ԵԳՊԱ հետազոտության բարելավումը՝ տրամադրելով խորհրդատվություն հետազոտության միջազգայնացման վերաբերյալ

7. Մշակել և ներդնել միջազգային ծրագրեր, որոնք կխթանեն ԵԳՊԱ-ի գործողությունների ու գործառույթների արդիականացումը:

Միջազգային կապերի բաժնի ռազմավարական գործողությունները

Աղյուսակ 2

Գործողություն	**Ենթագործողություն**	**Կատարողականի ցուցիչ**	**Վերջնաժամկետ**	**Հնարավոր խոչընդոտներ**	**Մեղմացուցիչ գործոններ**
1. Միջազգային կապերիբաժնի /ՄԿԲ/ գործունեության փաստաթղթավորում	1.1. Արտասահմանյան բուհերի միջազգային կապերի բաժինների փորձի ուսումնասիրություն՝գործառույթների, քաղաքականությունների և ռազմավարական ծրագրերի ուղղությամբ	Բենչմարքինգի արդյունքների փաթեթ	2016	Տեղեկատվության պակաս	Խորհրդատվություն, քննարկում ներքին և արտաքին գործընկեր բուհերի հետ, փորձի փոխանակում
	1.2. ՄԿԲ կանոնակարգի մշակում	Հաստատված կանոնակարգ	2016		
	1.3. ՄԿԲ ռազմավարական ծրագրի և քաղաքականության վերանայում	2016-2020թթ. միջազգային կապերի բաժնի հաստատված ռազմավարական պլան և քաղաքականություն	2016		Համագործակցություն բուհի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների հետ

2. Արտաքին կապերի զարգացում	2.1. Արտասահմանյան ուսումնական հաստատություններիհետ համագործակցության ընդլայնում	Արտասահմանյան հաստատությունների հետ գործող պայմանգրերի քանակը աճել է առնվազն 50%-ով	2020	Արտասահմանյան բուհերի շահագրգռված չլինելը, ծրագրային անհամապատասխանություններ	Ուսումնական ծրագրերի արդիականացում, նույնակի /программаблизнецы/ ուսումնական ծրագրերի մշակում
	2.2. Արտասահմանյան հետազոտական կենտրոնների հետ համագործակցության ընդլայնում	Երկկողմանի պայմանագրերի քանակի աճ առնվազն 50%-ով, գիտական հոդվածների տպագրում արտասահմանյան ամսագրերում՝ տարին առնվազն 1 հոդված	2020	Լեզվական խոչընդոտներ, հետաքրքրության, շահագրգռվածությ անպակաս	Ֆակուլտատիվ դասընթացների միջոցով լեզվի իմացության բարելավում, դրամաշնորհների ձեռք բերում
	2.3. Գործընկեր հաստատությունների հետ համագործակցության ընդլայնում Erasmus+ նախագծի "KA1"-ի շրջանակներում	Գործընկեր հաստատությունների հետ Erasmus + նախագծի ծրագրերի դիմումների աճ առնազն 50%-ով	2020	Ծրագրերի մերժման մտավախություն, բովանդակային, թեմատիկ անհամապատասխանություն	Գործընկեր բուհերի հետ համատեղ ծրագրերի մշակում
	2.4. Արտաքին գործընկերների հետ համատեղ մշակութային միջոցառումների կազմակերպում	Համատեղ միջոցառումների քանակի աճ առնվազն 20%-ով	2020	Ֆինանսական խոչընդոտներ	Ներգրավել պետական ֆին. աջակց. , Հիմնադրամների, բարերարների կողմից ֆինանս. աջակցություն

3. Դասախոսների և ուսանողների շարժունության ակտիվացում	3.1. Արտասահմանում ուսումնառելու, ուսանողների և դասախոսների շարժունության կարգի մշակում	Կարգ 2016		
	3.2. Հետազոտության ոլորտում համագործակցության կարգի մշակում	Կարգ 2016		
	3.3. Ուսանողների փոխանակման ծրագրերի իրականացում	Փոխանակմանը մասնակցած ուսանողների քանակի աճառնվազն 40%-ով 2020	Կրթաթոշակների ոչ բավարար քանակ, ուսանողների ֆինանսների սղություն	Դրամաշնորհների ձեռքբերում: Անապահով ուս. ֆինանս. աջակցություն
	3.4. Դասախոսների փոխանակման ծրագրերի իրականացում	Փոխանակմանը մասնակցած դասախոսների քանակի աճ 2020	Կրթաթոշակների ոչ բավարար քանակ, դասախոսների ֆինանսների սղություն	Դրամաշնորհների հայթայթում ապահովելով դասախոսների վերապատրաստումը
	3.5. Արտասահմանցի ուսանողների ներգրավում ԵԳՊԱ-ում	Արտասահմանցի ուսանողների քանակի աճ առնվազն 30%-ով 2020	Օտար լեզվով ՄԿԾ-ների բացակայություն	Օտար լեզվով դասընթացների կազմակերպում
	3.6. Լեզվի ուսուցման դասընթացների կազմակերպում	Դասընթացի փաթեթ, մասնակիցների ցանկ 2020		Կազմակերպել մասնագիտական առարկաների կարճաժամկետ դասավանդումը օտ. լեզվով զուգահեռ հայոց լեզվի

				դասավանդմամբ
4. Կրթական ծրագրերի բարելավում	4.1. ԵԳՊԱ ՄԿԾ-երի մշակման ձեռնարկի վերանայում՝ միջազգայնացման սկզբունքներին համապատասխան	Վերանայված ձեռնարկ 2016		
	4.2. ՄԿԾ-ների բարելավում՝ միջազգայնացման սկզբունքներին համապատասխան /պիլոտային/	Առնվազն 2 վերանայված ՄԿԾ-ներ 2016	Դասախոսական կազմի ոչբավարար հմտություններ, մոտիվացիայի պակաս	Միջազգային ծրագրերին մասնակցության և վերապատրաստման շնորհիվ ՄԿԾ-երի բարելավման գործընթաց, որը նպաստում է դասախոսների շահագրգռվածության ը
	4.3. ԵԳՊԱ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրսատում՝ ՄԿԾ-րի միջազգայնացման սկզբունքների և մոտեցումների վերաբերյալ	Վերապատրաստմանը մասնակցել են յուրաքանչյուր ՄԿԾ-րի դասախոսների առնվազն 20%-ը 2017	Մոտիվացիայի պակաս	Փորձի փոխանակում, վերապատրաստման հնարավորություն, նոր գիտելիքների և հմտությունների ձեռք բերում, հետազոտական աշխատանքի հնարավորություն

	4.4. ԵԳՊԱ բոլոր ՄԿԾ-րի վերանայում՝ միջազգայնացման սկզբունքներին համապատասխան	Վերանայված ՄԿԾ-րի փաթեթներ	2020	Դասախոսական կազմի ոչ բավարար օտար լեզվի հմտություններ, մասնագիտական դասավանդման արդիականացում, մոտիվացիայի պակաս	Օտար լեզվի դասընթացների կազմակերպում, փորձի փոխանակում և վերապատրաստում առցանց, փոխադարձ այցերով
	4.5. Օտար լեզվով ՄԿԾ-ների մշակում	Օտար լեզվով առնվազն 1 ՄԿԾ-ի փաթեթ	2018	Անձնակազմի օտար լեզվի ոչ բավարար իմացություն	Ակադեմիական Ծրագրերը (ՄԿԾ) օտար լեզվով դասավանդելու համար դասընթացների կազմակերպում՝ ուղղված դասախոսական, վարչական կազմին
	4.6. Օտար լեզվով դասավանդման լիցենզիայի ձեռք բերում	Օտար լեզվով դասավանդման լիցենզիա	2019		
	4.7. Օտար լեզվով ՄԿԾ-ի իրականացում	Օտար լեզվով ՄԿԾ-ում ներգրավված ուսանողներ	2020	Անձնակազմի օտար լեզվի ոչ բավարար իմացություն	Օտար լեզվի դասավանդում ըստ լեզվի իմացության մակարդակների

5. Որակիապահովում	5.1. Բաժնի գործունեության թափանցիկության ապահովում	Բաժնի աշխատանքային փաստաթղթերի և տեղեկատվության առկայություն ԵԳՊԱ կայքում	2016-2020		
	5.2. Հաշվետվողականության ապահովում	Հաշվետվություններ տարեկան գործունեության մասին	2016-2020		
	5.3. Մասնակցություն ԵԳՊԱ ինքնավերլուծությանը	Ձևավորված խումբ, ինքնավերլուծություն	2016-2020		
	5.4. Բաժնի գործունեության գնահատում	Վերլուծություններ	2016-2020		
	5.5. Բաժնի գործունեության բարելավում	Վերլուծությունների հիման վրա գործառույթներում, կարգերում և ընթացակարգերում կատարված փոփոխություններ	2016-2020		